Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99
F-12

2166 N 2166

№ 2. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԴԱՒԹԵԱՆԻ № 2.

ՍԻՄ. ԲԱԲԻԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

391.99
Բ-1

Մ.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ»
1904

2160
01 JAN 2009
06 DEC 2011

№ 2. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԴԱՒԹԵԱՆԻ № 2.

199
F-13

ՍԻՄ. ԲԱԲԻԵԱՆ

ՊԱՐԿԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ «ՄԱՍԻՍ»
ԵՐԵՎԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

505
1950
ՊԱՅՈՒԵՈՅԼ
ՀԿԵՈՅԼՈՇ-ԼՈՒՍՈՏՅԱՆ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ
1904

12.11.2013
22856

Дозвол. Ценз. С.-Петербургъ, 7 Мая 1904 г.

„Пушкинская Скоропечатня“, Лештуковъ, 4.

ԱՐՄԵԱՆՍԿԸ

(Սոնէտ)

Մեղմացաւ արդէն ծովիցը փչող ցերեկուայ
քամին.
Միայն մի-երկու հողմաղացների թեւեր են
շարժվում.
Թաթար ու խուրբէտ, բարձրը երգելով,
իրիկնաժամին
Փոշոտ փողոցով դէպի հողաշէն տներն են
ուղղվում։

Մօտիկ ճամբի մինարէի վրայ երեւաց մօլլան
Եւ օդը յանկարծ լցուեց եատսուի կլկլոց-
ներով.
Դրան անյապաղ նոյնպիսի թախծոտ ձայներ
միացան.
Ջերմեռանդ մարդիկ մեզիտ են գնում շտապ
քայլերով...

Մութը տարածուեց, բայց արևելքից ահա
հանդարտիկ
Սահեց լուսնկան և արծաթ շողեր ցիր ու ցան
արեց։
Խեղդուկ տներից փողոց դուրս եկան խոնջա-
ցած մարդիկ։

Դաշտից՝ կալ հսկող թաթարի սրնգի ձայնը
դադարեց
Եւ վերջին անգամ հանեց հոգմտադացն ընդհա-
տուած ճռինչ...
Արուսիկների սուլումից ի զատ լռեց ամեն
ինչ։

Բ Ո Ի Փ Ը

(Սոնէտ)

Սառած ծովի և ծիւնապատ դաշտի վրայ
Սանձարձակ բուքն իր մահաշունչ խաղն էր
սարքել.
Ծառնոցն՝ խսպառ լցուած փափուկ ծիւնով, նրա
Սոպռ ու վայրագ օրօրերդով քուն էր մտել։

Այնքան էր ցուրտ, որ պարզնկայ չինչ եթերում
Աւելի վառ չէին կարող շողալ աստղեր.
Թւում էր ինձ, որ ծածկլուող ուղիներում
Սողուն քամին շաղ էր տրւել սառցի բոցեր։

Զորս կողմըս ծիւն, անվերջ սառ ծիւն, էլ ոչ
մի բան.
Հէնց ահաւոր մահն էր կարծես փռել նրան
Եւ ինքն ուրախ ու վայրախինդ պար էր
դալիս։

Եւ՝ պարզորոշ, թանձրը օդով լոդ էր տալիս
Ծովի կողմից երբեմնակի սառցի ճայթոց,
Եւ հոգմն անդուսպ, խօլ ֆշշացնում իբր
ահեղ օձ...

ԶԱՏՐԴԱՂ

(Միցկևիչի «Խրիմի սոնետներից»)

Ես զողզողալով համբույր եմ տալիս ամուրքիդ հետքին,
Մեծդ Զատրդաղ, Եայլայի կարող, հսկայազոր խան.
Ո՜հ, Խրիմի կայմ, երկրի մինարէ։ Խորունկ էթերքին
Հասել ես զլխով և աստղերի մոտ որոշել սահման։

Ահեղ՝ Եդեմի դռները հսկող Գաբրիէլի նման,
Մենակ, անսասան կանգնած ես դու միշտ երկնի դռան տակ։
Թիկնոցդ է անտառն, իսկ հիւսուած չալմաղ— ամպերն սպիտակ,
Եւ շանթն իր փայլով սիրուն նկարներ գործում է վրան։

Թէ տապն է կիզում, թէ մութ իրիկուն ժուխ լողում է խաղաղ,
Թէ մարախ թռչում, թէ դեւաւուրն այրում գիւղ, շէնուաւան,
Խուլ ու համր ես դու, ո՜հ դժնահայեաց բարձր Զատրդաղ։

Անայլայլ թարգման համաշխարհային ըստեղծագործման,
Որոտմունք, ջրեր, երկիր և աղդեր ոտքիդ տակ փռած
Լոկ այն ես լսում, ինչ որ բնութեան ասում է Աստուած։

ՊԵՐԵԿՕՊԻ ՊԱՐԱՆՈՑԻ ՎՐԱՑ

(Սոնէտ)

Միջօրէի տապից կիզուած դժգոյն երկնում
Մի ամպ չը կայ։ Խայտաճամուկ ու բծաւոր
Մողէսն ու իժն արևի տակ սահուն սլլում,
Կամ թէ անշարժ՝ չոր, տապախարշ—հրա-
տոչոր

Օդն են շնչում քնքշանալով։ Լռւռ է, հան-
դարտ...
Ահա այնտեղ՝ նեղ շուաքում, մահճառի տակ
Զգուեց թաթարն. ուղտերն իր մօտ, վէս ու
հպարտ,
Որոճալով, շուրջն են նայում աննպատակ։

Արևելքում մօտիկ է ծովն. այն ափերից
Հովիկն իր հետ բերում է մերթ նեխուածքի
հոտ։
Բայց դէպի ծախ աչք ածելով՝ ես եթերից

Ծովը ջոկել չեմ կարենում։ Ափերի մօտ,
Այնտեղ՝ հեռուում երգում է նա, ծփանք տալիս,
Եւ վեհ, ազատ, յետ ու առաջ գնում-գալիս։

———

ՊԵՐԵԿՕՊԻ ԴԱՇՏԵՐՈՒՄ

(Սոնէտ)

Անշէն, լայնարձակ ու անծայրածիր դաշտով
եմ անցնում...
Լուսնկայ գիշեր՝ վեհ, գեղատեսիլ, անդորր
ու խաղաղ.
Արուսիկների ճառագն է միայն ականջիս հաս-
նում—
Անբաժան ճառագ՝ անմեկին, անդուլ և միա-
պաղաղ։

Ահա առաջիս աղի ծովակի ջրերն են խաղում.
Ի՞նչ հրաշագեղ տեսարան է այն ներքևում
փռուած.
«Կլոր» լիճն է այդ. անջուր տեղերից աղն է
պսպղում...
Անցնում եմ նրան։ Բայց ահա դարձեալ մի
լիճ երևաց։

Անցնում եմ կարդով «Կարմիր», «Կիտեան»
լճերի մօտով,
Բլրից մօտենում վէս, արծաթաշաղ «Կեր-
լևուտ» լճին...
Սահման... է՛լ հեռուն—դաշտեր, սիվաշներ՝
ծծումբի հոտով...

Ո՜հ, սիրուն լճեր։ Այս լայնածաւալ դաշտերի
մէջին,
Պայծառ օրերին կամ գիշերներին դուք էք,
դուք մենակ,
Որ ուղևորիս սթափուել էք տալիս դէթ առ
ժամանակ...

ԾՆՆԴԵԱՆ ԼՈՅՍԸ

(Սօնէտ)

Լոյսը շողաց Բէթլէհեմի մռայլ այրից,
Որ մարդկութեան անլոյս սրտից մութը վանէ.
Լոյսը շողաց, որ յաւիտեանս յաւիտենից
Վեհ աւանդներ մարդկանց սրտում վառ պահ-
պանէ։

Եւ դարերի խիտ խաւարում շողշողալով,
Այժմ էլ է նա լոյս տեսիլ հեզ, մեղմիկ փայլով,
Որ յիշեցնէ միշտ հոգսաղբաղ արարածին
Անկարողի, տապակուողի սարուկի մասին։

Հոգէվառ լոյս. ճշմարտութիւն, հաւատ և սէր
Նա է ծնել այն անմոռաց վսեմ գիշեր.
Ըստոյգ կեանքի հիմք—լոյսն է նա, որ միշտ
անմար

Պիտի շողայ անկման հակուած մարդու համար
Իբր ուղեցոյց, որից սակայն շատերն արդէն
Իրանց դէմքերն անզգուշութեամբ դարձրել
են դէն։

ՀԷՑՆԷԻՑ

Որտեղ պիտ՝ գտնեմ, ով օտարական,
Իմ ոսկորներին հանդիստ գերեզման.
Հռենոսի սիրուն կակղիվ տակին,
Արմաւենու տակ կիզող հարաւին.

Խուլ անապատում արդեօք հեռաւոր
Օտարի ձեռքով պիտ՝ հանդչեմ անդորր.
Արդեօք Ծովի մօտ՝ աւազանի միջին
Անդարթ պիտ՝ քնէ իմ անշունչ մարմին:

Էհ, ի՞նչ եմ ասում: Զէ՞ որ միշտ, յաւէտ
Տիրոջ երկինքը կը լինի ինձ հետ,
Եւ պէսիս վերև աստղեր անհամար,
Ինչպէս կերոններ՝ կը վառուեն պայծառ:

Ա. ՄՊԵՐ

Եթերում հանդարտիկ ամպեր են լողում՝
Իրանց չուն ուղղակի դէպի հիւսիս բռնած
Եւ ասես՝ ալէծուփ ովկեանի հեռուում
Ջուր են լուռ ընկղմում խորշակից կիզուած:

Արևից տաքացած ծովից՝ աննշմար
Դէպի վեր ամբառնում, բարձրանում են ամպեր
Եւ չլուում դէպ հեռուի փիրուզէ կամար,
Ձգելով վէտ ալեաց սահուն ստուերներ...

ՓՈԹՈՐԻԿ

Փոթորկած ծովին նայում էի ես.
Դաժան ալիքներն՝ ահեղ, փրփրադէզ,
Որոտ—շառաչով ժայռն էին կոծում,
Կոծում մոլեգին, ցիր—ցան փշրվում։

Մռնչում էր ծովն ամեհի ծայնով,
Եռում և փրփրում լեռ ալիքներով.
Քամին հեծելով ոռնում էր ուժգին
Եւ մռայլ մշուշ պատում էր ծովին։

Սևագնած երկինքն անթիւ շանթերով
Եւ հսկայ տարերքն իր խօլ ջրերով
Իրար միացած կռիւ էին սարքել
Վճռած՝ կամ մէկին կամ միւսին մեռնել։

Եւ այս համասփիւռ յուզմունքի ժամին
Միայն վիթխարի, վէս լեռներ էին,
Որ առաջուայ պէս հանդիստ, անխռով՝
Զբաղուած էին իրանց մաքերով...

ՍԵԻ ԾՈՎԻ ԱՓԻՆ

Պառկած եմ տխուր Սև ծովի ափին՝
Աւազի վրայ և նայում հեռուն,
Դէպի այն կողմը, ուր հոգնած արփին
Մօտ է հասնելու ալիքին խաղուն։

Թեթև, շոփաշունչ քամի է փչում
Եւ մեղմիկ շոյում երեսը ծովի.
Անհոգ ալիքներ գալիս են, գնում
Եւ խաղում վերջին շողքովն արևի...

Արևը մտաւ... Քամին դադարեց...
Մթնեց... Ծովն արդէն նիրհում է անդորը...
Տանջուած հոգիս էլ թմրեց, խաղաղուեց,
Այս լռութեան մէջ՝ վե՜հ, խորհրդաւո՜ր...

ԳԱՂԹԱԿԱՆԻ ԵՐԳԸ

Մեր արնակոլոլ դաշտերը թողինք,
Ցիր ու ցան եղանք օտար աշխարհում.
Սևով ծածկուեց մեր պայծառ երկինք,
Սևը ծանրացաւ և մեր սրտերում։

Մեր բալաներին զուլում արեցին
Մեր իսկ տան միջին, մեր աչքի առաջ,
Մեր օղլուշաղներ եսիր տարեցին,
Մեր գիւղեր դարձրին դամբարան անխաչ։

Օտարութեան մէջ, հեռու վաթանից,
Մեր կեանքը ճնշող, ծանր է մեզ համար։
Ա՜խ, ե՞րբ պիտ՝ տեսնենք արդեօք մենք նորից
Մեր վշտատոչոր մայրենի աշխարհ...

Հ. Ս. Խ. Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Բ. ԱՐԱՐԱՏՅԱՆ
1922
Մայր Դպրոց
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՇԱՐԼ ԲՈԴԼԷՐԻՑ

Ի՞նչ է ձեզ երկինքն ապադայ յաւերժ չարչարանքներով,
Ի՞նչ է ձեզ վճիռն երկրի խստամբեր, ուղիղ օրէնքի.
Խիղճ, ճշմարտութիւն—պարապ հնչիւններ կոչում էք ծաղրով,
Ձեզ համար փառքի փայփայող հայեացքն անպէտք է իսկի։

Ո՛հ, քայլեցէք դուք, անկումի ճամբով քայլեցէք առջև,
Ներքև՜, է՛լ ներքև իջէք գեհենի բաց երախն անկիշտ,
Ուր ողջ յանձանքներն անմար կրակի փոթորկի ներքև,
Անկարգութեան մէջ, օձի շչիւնով, եռ են գալիս միշտ։

Անապարեցէք, ո՜հ թշուառ զոհեր, վազեցէք
արագ,
Ձեր առողջութիւն, ձեր խելքն ու պատիւ
զուր շռայլեցէք։
Անսանձ հեշտասէր ձեր ցնորմունքներն ագահ
են, անյագ,
Եւ վայելչութեան անդունդի տակին զուք
քէն կը գտնէք։

ԾՈՎՆ ԱՇՈՒՆՔԻՆ

Արագընթաց
Ու վայրագնաց
Ամպեր երկնին տիրացան.
Անգուսպ քամին
Շնչեց ուժգին,
Մահերգ երգեց լալածայն։

Իսկ ծովն անդուլ,
Ցասկոտ և խուլ
Կռիւն է մղում դարաւոր.
Կոծում եղերք,
Երգում օրհներգ,
Միշտ սիգապանծ, փառաւոր։

ԱՆՓՈՅԹ ՃԱՄԲՈՐԴՆԵՐԸ

Նայի՛ր և ցնցուի՛ր ահեղ դրամայից.
Տեսնում ես՝ այնտեղ, ահռելի ծովում,—
Որ գժոխք է դառել ծմրան ցուրտ հողմից,—
Այն նաւի վրայ ինչ է կատարվում։

Շատ է ցուրտ... Նաւին սառոյց է պատում.
Կարող է արդեօք նա եղերք հասնել.
Վրան աննշմար սև մահն է պտտում,
Ուզելով նրան անդունդը տանել։

Չէ՞դ նաւաստիներ. ոյժերից ընկած,
Ձիգ են հա թափում նաւը փրկելու.
Ո՞հ, նրանք դիտեն և չ՚ունեն կասկած,
Որ յոյս կայ, յոյս կայ մահից փախչելու։

Սակայն ճամբորդներն այդ կուրին անմաս,
Անփոյթ, դինէհար կատակ են անում
Եւ չեն մտածում, ի՛նչ դժան օրհաս
Սպասում է իրանց անկիշտ ովկեանում...

ՄԱՆՈՒԿ ՀՈՎԻՒԸ

Վաղ առաւօտեան, դեռ լուսածագին,
Դէպի դաշտ քշեց նա ոչխարներին.
Նստեց դեռնի վրայ, սկսեց սրնգել
Եւ նրա ձայնը հեռուն տարածել։

Բնութեան որդին սիրում է արօտ,
Կանաչ դաշտավայր և երկինքն աստղոտ։
Դաշտի թարմ օդը՝ շնչով կենսական,
Լցնում է նրա կուրծքը մանկական։

Իսկ երբ սև ամպեր երկինքն են պատում,
Ահեղ դոռումով կայծակն է ճայթում—
Ականջ է դնում նա մռայլ դէմքով,
Որ ընտելանայ նրան էլ հողուով։

ՀԵՌԱՒՈՐ ՄՏԵՐԻՄՆԵՐԻՍ

Օտար կողմում երբեմնակի
Նստած տխուր, միայնիկ
Դէպ՝ ձեզ եմ ես, ձեզ ուղղակի
Յուշով թռչում, սիրելիք։

Այս անհամբոյր օտար տեղում
Չը կայ բերկրանք ինձ համար,
Սառ ժանօթներ սիրտս են նեղում.
Մենակ եմ միշտ ու թափառ։

Եւ անձկութեան խօլ ժամերիս,
Կարօտակէզ, թախծալիք,
Ձեզ եմ խկոյն ես ծայն տալիս.
Լսո՞ւմ էք ինձ, սիրելիք։

ԲՕԴԵՆՇՏԵԴՏԻՑ

Մի ժամանակ ես ուզեցի
Փարթամ պսակ քեզ հիւսել
Եւ ծաղիկներ որոնեցի,
Բայց դեռ գարուն չէր եկել։

Հիմա նրանք, որ կողմ նայեմ,
Ամենուրեք անքանակ,
Սակայն որի՞ն ես զարդարեմ՝
Դու պառկած ես հողի տակ։

---

* *
*

Ինչո՞ւ ես դարձեալ խռովում հոգիս...
Ո՛չ. մի հարցնիր ինձ, թէ ինչո՞ւ համար
Թշուառ ու թափառ հէգ եղբայրներիս
Դարդ ու ցաւերից չեմ երգում իսպառ։

Ա՜խ, ինչպէ՞ս երգեմ. եթէ ուզէի
Սրտումս եղածն երգել ծայրէ ծայր,
Ո՞րտեղից խօսքեր պիտի գտնէի,
Որ երգս լսողն ամեն ինչ զգար։

Շատերն են զգայուն լարերով երգել,
Շատերի աչքից խլել արցունքներ.
Բայց գիտցիր՝ ոչ ոք չէ կարողացել
Ասել այն ամենն, ինչ սրտում ունէր...

Էլ մի՛ հարցնիր ինձ, թէ ինչո՞ւ համար
Թշուառ ու թափառ հէգ եղբայրներիս
Դարդ ու ցաւերից չեմ երգում իսպառ.
Այդ ցաւն անեղերք ովկեանն է, հոգիս։

Է Լ Է Գ Ի Ա.

Օրը մութ, մռայլ և մշուշային,
Անձրև է գալիս, ցեխն աւելանում,
Եւ ձիւն է յանկարծ յաշորդում թօնին,
Բայց ցեխը նրան իսկոյն կլանում,

Ծածկում է աչքիցս... Անցնում են ժամեր
Եւ տեսնում ես մի ուրիշ պատկեր.
Երկինքը դարձեալ անարև, ամպած,
Իսկ դեռնի վրայ քնքուշ ձիւն փռուած։

Այդ մշուշային, մռայլ օրուայ պէս
Ցաւատանջ հոգիս միշտ մութ է, անլոյս,
Եւ իմ թախծապատ սրտում, իսկապէս,
Չէ փայլել շողուն, յարատև մի լոյս։

Օ՜, սիրտ իմ, տոկա՛ և մի՛ վհատիր.
Չէ՞ մառախլապատ օրերից յետոյ
Գարուն է գալիս, նորոգվում երկիր՝
Պայծառ, կենսատու արևի ներքոյ։

ՄԵԾ ԵՒ ՓՈՔՐ ՄԱՍԻՍ

Մեծ Մասիսը դարեր անհուն
Իր զաւակի մօտ կանգնած՝
Աչքը նրանից չէ հեռացնում,
Միշտ նայում է երկիւղած։

Շատ է սիրում նա Փոքրիկին.—
Ո՞վ է սիրում նրա պէս.
Ահա, նայիր հայր—հսկային,—
Նա միշտ այդպէս է, այդպէս...

ՀԷՑՆԷԻՑ

Եւ դաշտ, և անտառ կանաչ են հագնում,
Ուրախ, խնդագին երգում թռչնակներ,
Եւ անհուն քնքշանք շնչում է օդում...
Շուտով կը հասնեն գարնան պարզ օրեր։

Գարնան հետ ահա ես էլ զարթեցի
Եւ թօթափեցի իմ դաժանութիւնն.
Թռչնոց երգերով ոգևորուեցի,
Երգում եմ տխուր երգասացութիւն։

Ինձ կարեկցութեամբ հարցնում է սարեակ.
«Ինչո՞ւ է քո երգն անխինդ, վշտալից»։
—Վաղուց է արդէն, ո՜հ աղատ թռչնակ,
Այդ երգը ժնուել անբաղդութիւնից։

Քանի՜ տարիներ հնչեցրել է այն
Դաշտեր, ծառաստան, անտառ ու պարտէզ...
Քո տատն էլ, սարեակ, լսել է նրան,
Մի՞թէ չը դիտես...

ՄԵՑԻՍԵԱՆ ԳԻՇԵՐԻՆ

Հօրիզոնից երկինք սահեց
Պարզ լուսին.
Թեքուեց թմրած առուի վրայ
Ուռենին։
Շուրջս խաղաղ, շուրջս անդորր
Ու լռիկ,
Միայն երբեմն շշնջում էր
Մեղմ հովիկ։
Մնջիկ նստած անուշաբոյր
Պարտիզում
Մինչ ուշ գիշեր ականջ դրի
Անկշտում՝
Ոնց բնութիւնն երկնքի հետ
Ներդաշնակ
Երգեց սիրոյ խորհրդաւոր
Մի նուագ։

ՁՈՐՍ ԸՆԿԵՐ ԷԻՆՔ...

Զորս ընկեր էինք մակոյկի մէջին։
Գիշեր էր չորս կողմն՝ ահռելի գիշեր.
Մենք լողում էինք մեր երկար ուղին
Զը խրնայելով պատանի ոյժեր։

Սակայն ընկերներս, կէս ճանապարհին,
Մոլոր պէս յանկարծ կանգ առան.
«Ո՞ւր է փարոսը»—նրանք հարց տուին,—
«Ինչո՞ւ մինչև այժմ չենք տեսնում նրան»։

«Էլ չենք կամենում մենք շարունակել
Այս աննպատակ կռիւն անհաւասար.
Վճռել ենք մօտիկ եղերքին հասնել
Եւ մի ճար դտնել այնտեղ մեզ համար»։

Եւ ջուրը մտան... Իսկ ես անխռով
Շարունակեցի իմ բռնած ուղին.
Փարոսն երևաց, և նրա լոյսով
Ես ոտք կոխեցի բաղձալի ափին...

***

Ինչո՞ւ երգիչը արդէն չէ երգում.
Ի՞նչն է պատճառը, որ յանկարծ լռեց։
Արդեօք խորին վի՞շտ ունի նա սրտում,
Կեանքի աղմուկի՞ց արդեօք նա զզուեց...

Ո՛չ. մի՛ մտածէք։ Մրրկից առաջ էլ
Լռութիւն է տիրում կարճ ժամանակով։
Երգիչը դարձեալ կը սկսէ երգել,
Մեզ կը սթափեցնէ կրակոտ երգերով։

***

«Սարսափելի չեն հային տառապանք՝
Միայն չը հատներ խըղճուկի յոյսը»։
Գամառ-Բաթիպա։

Աշուղ, դու ազգիդ «միշտ յուսա՛» ասիր,
«Թէկուզ տակն ու վրայ լինի ողջ աշխարհ»,
Եւ ինքդ ց՝մահ յոյսդ չը կորցրիր,
Բայց մեր սև օրին լաւ որ չը հասար։

Ո՛հ, ի՜նչ կը լինէր, եթէ մեր օրում
Տեսնէիր եղբօրդ այսպէս բունաւո՜ր,
Անարգուա՜ծ, թափա՜ռ այս ու այն երկրում,
Կորցրած տուն ու տեղ, կին ու զաւակներ։

Դու կը տեսնէիր աշխարհը սառած,
Ծովերն՝ արիւնոտ, երկինքը՝ խաւար,
Եւ այս պատկերի հանդէպ, կարկամած,
Լաց կը լինէիր դու սրտապատառ։

ՍԱԼԳԻՐԻ ԱՓԻՆ

Այս առաւօտ գետի ափին
Ես ճեմեցի միայնիկ,
Մոյգ-կապոյտից գարնան արփին
Ցոլք էր թափում խաղաղիկ։

Սակաւաջուր գետն առաջիս
Հոսում էր հեզ կարկաչով
Եւ զով քամին պաչ էր տալիս
Մանր ալիքին դղուելով։

Իսկ լուսափայլ, պարզ ու յստակ
Կապուտակի անհունում
Մի թափանցիկ և սպիտակ
Ամպ էր դանդաղ հալ ընկնում։

Եւ այն հալուող ամպի նման,
Իմ նորոգուած սրտի մէջ՝
Հանգչում էր մեղմ ու լռելեայն
Իմ վիշտն իսպառ, մինչ 'ի վերջ։

ԿԱՐԵԿՑՈՒԹԻՒՆ

(Մ. Դուբինսկուց)

Տանջուած սոսկալի ցաւերով մահուան,
Շուշանը, գետի ափին խոնարհուած,
Ջրի մէջ տեսաւ մի ուրիշ շուշան՝
Մահուան սոսկալի ցաւերով տանջուած։

Պայծառ մայիսի ծաղիկը չքնաղ
Կորացաւ դէպի խեղճ ընկերուհին,
Իր ճիւղը հասցրեց ջրերին խաղաղ
Եւ լուռ նայում էր նրա երեսին։

Եւ խրոխտայոյզ վերջին տագնապում՝
Մահուանից առաջ, խեղճը չը դիտէր,
Որ իր պատկերն էր ջրի մէջ տեսնում,
Որ այն մեռնողը հէնց նա ինքն էր։

ՈՒՂԵՑՈՑՑՆԵՐԻՆ

Տատասկոտ, դժուարանց ուղին թողնելով,
Զուր են, զուր ընթանում շատերն ուրիշով.
Եւ ափսոս այն մարդուն, որին չէ յայտնի,
Ինչպիսի վայելքներ նեղ ճամբան ունի։

Երանի, երանի այն սակաւ մարդկանց,
Որոնք նեղ, մտաթող ուղին են բռնած.
Երանի զորժունեայ ուղեցոյցներին—
Մշակներ, զինուորներ պատրաստողներին։

Ա. Ր Ե Ի Ա. Ծ Ա. Գ

Թանձր մառախուղն արևագալին
Զգալի կերպով փարատուել սկսեց.
Ամպերը գլխիս վերև ճեղքուեցին
Եւ պարզ երկնքի մի մասն երևեց։

Պլպլան աստղերն իրար եռևից
Աստիճանաբար մարեցին, հանգան,
Եւ նսեմ շողեր թափում է վերից
Այժմ մեն-մենակ դուռնատ լուսնկան։

Դաշտից զովասուն հովիկ է փչում
Եւ մեղմ օրօրում սաղարթ ու ծաղիկ.
Լճակի ափին, փարթամ պարարտում,
Սոխակն է երգում ուրախ դայլայլիկ։

Երկնի պերոզակն անբիծ գեղութեամբ
Փայլում է հիմա պարզ, ծիծաղերես,
Եւ պայծառ արփին վէս շքեղութեամբ
Ծագում է մնջիկ մի մեծ գնդի պէս։

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ԷԼԷԳԻՍ

Յաւէրժութեան ովկեանում սուզուեց հին
տարին,
Սուզուեց ինչպէս նախկիններն՝ անդարձ,
յաւիտեան,
Իր եաւից թողնելով ողջ չարն ու բարին՝
Անհաւասար բաժանուած դժբաղդ մարդկու-
թեան։

Լող է տալիս իմ հոգին հին չարիքների
Փոթորկածուփ մութ ծովում դիմակիր ոյժով
Եւ, համասփիւռ բերկրանքից անջատ ու հեռի,
Դիտում նսեմ ապագան լի բուռն աշխոյժով։

Թեթեւասլիկ ու նանիր հրճուելն ի՞նչ օգուտ,
Մինչ նորն է հին, հինը՝ նոր յաւէտ, անփոփոխ։
Թող ժամանակն ընծայէ մարդկութեան սէր,
դութ,
Թող խափանուեն սրտերից նենգութիւն ու ոխ,

Այնժամ միայն «Նոր տարին հասաւ» կը
ձայնեմ
Եւ ողջոյնի սկահակից զինին կում կ՚անեմ։

ԿՈՅՍՆ ՈՒ ՊԱՏԱՆԻՆ

Նրանց դէմ ցեխոտ ուղի էր փռուած
Եւ շուրջը ճահիճ՝ դժուարանց ու խոր.
Կեղտով անցնելու չէին ստեղծուած
Նազելի կոյսի ոտիկներն անզօր։

Սակայն պատանին՝ հսկան անվեհեր,
Պարթև էր հուժկու, կատարեալ մի Բէլ.
Քայլում էր վստահ. և կոյսն աներեր
Թոյլ տուեց նրան իրա գիրկն առնել։

Եւ առաջ անցան... Սակայն ո՞վ զարմանք.
Ի՞նչն էր, որ գերեց սիրտը պատանու։
Այն և՛ս արդեօք չէ՞ր լոկ մի պատրանք,
Որ ջերմ հպուեցին շրթերն իրարու։

«Ոհ, ինչո՞ւ... ինչո՞ւ...» կրկնեց պատանին,
Կոյսի մեղկ շնչով խսպառ համակուած,
Եւ ուժեղ կռներն խկոյն թուլացան.

Ամուր ոտքերը ծալուել սկսեցին,
Եւ, օրհասական սարսափով լցուած,
Նրանք միասին ցեխի մէջ ընկան...

Ա Ղ Օ Թ Ք

Քեզ եմ աղերսում, ամենակալ Տէր,
Որ տալիս ես կեանք, լոյս պայծառ և սէր.
Տուր իմ մեղքերին, ո՜վ Տէր, թողութիւն,
Վշտի ժամանակ՝ մխիթարութիւն:

Իմ ապաստանը Քեզ մօտ է, ո՜վ Տէր,
Այստեղ մաշում են ինձ անվերջ ցաւեր:
Ո՜վ իմ Արարիչ, փրկիր ցաւերից.
Տէր, աղերսում եմ Քեզ արտասուալից:

Մ Ա Հ Ը

Այս աշխարհում մահն է մենակ
Կայուն, մշտական.
Աղգերի կեանքն՝ առժամանակ
Ու անցողական:

Ոնց ալիքներն ովկեանում
Խփվում են իրար,
Անդուլ կուռով ափ են վազում
Եւ մոլեգնաբար

Եղերքներին զարնուելով՝
Փրփուր են դառնում
Եւ ջրի հետ խառնուելով
Իսպառ չքանում,

Նոյնպէս ամեն մի ազգ մահի
Ուղին պիտ՝ բռնէ,
Աղէտների պիտ՝ պատահի,
Իբր՝ ամբողջ—մեռնէ:

Մարդը՝ չնչին մասնիկն աղգի,
Ի ծնէ թշուառ,
Մինչ՝ ե՞րբ դաւեր պիտի սարքի
Իր պէսի համար։

Զէ՞ աշխարհում մահն է մենակ
Կայուն, յարատև.
Պիտ՝ խաւարի և վառ լուսնակ,
Եւ պայծառ արև։

Ո՞վ դու Տիրոջ չնչին, դժուժ
Դժբաղդ արարած,
Դէ՞հ, դադարիր չար գործելուց—
Մահն է քո դիմաց։

ԽՐԻՄԻ ՅՈՒՇԱՏԵՏՐԻՑ

Լող է տալիս լուսնկան աստղի ովկեանում
Եւ ալեաց հետ շողերով խաղեր է անում.
Իսկ Ծառնոցի վիթխարի նոճերը հանդարտ
Ափին ծփող ալիքին նայում են անթարթ։

Ո՛հ, յարաւի լուսնկայ գեղանի գիշեր.
Ես քեզ նման լուսառատ գիշեր չեմ տեսել։
Դու յարուցիր անցեալիս քաղցրալի յուշեր,
Եւ չորս կողմից, ուր լուսինն իր շողքն է լցել,
Արծաթ շողքով ողողել ծով, լեռ ու ծմակ,
Տեսնում եմ ես ոլորուող ցնորք ու շուաք...

Լաւ է այստեղ՝ ծովափին, նոճիների քով.
Խաղուն ծովին նայելով ցնորում եմ ես
Եւ անմեկին երկիրներ սլանում մտքով,
Ուր սէր կայ, սէր անսահման՝ այս վեհ ծովի
պէս...

ՀԷՑՆԷԻՑ

Թէ ինչպէս անգութ վարուեց ինձ հետ նա,
Ես թոյլ չը տուի, որ մարդ իմանայ,
Սակայն ելայ ծով և ծայրէ ի ծայր
Պատմեցի ծկանց՝ ինչ սրտումս կար։

Ես բարի անուն թողեցի նրան
Այժմ միմիայն ցամաքի վրան,
Բայց բնութիւնը նրա անպատկառ
Ցայտնի է ամբողջ ովկեանին անծայր...

ՆՈԻԷՐ

ուսուցչիս՝ Եր. Շ.-ին։

Ես վաղուց շուրջս դորշ մշուշ եմ տեսնում,
Հոգեմաշ մառախուղ, որին թափանցել
Նոյն իսկ սուր հայեացքով չեմ կարողանում,
Որ, սակայն, դեռ երբէք ոյժ չէ ունեցել
Խլացնել մինչև իսկ մի նուազ թառանչ,
Դուրս թռած իմ քամբաղդ եղբօր բերանից.
Եւ իբրև վիթխարի զանգակի զօղանջ,
Մի հզօր ձայն է միշտ առաջնորդել ինձ
Թանձրամած, լուսարդել խաւարի միջով,
Չէ թողել հնաղանդուել կեանքի հաճոյքին.
«...Իդէան սիրեցէք ողջ էութիւնով,
Նրա հետ ընթացէք...» կոչին անսալով,
Ես մի օր կը հասնեմ սուրբ նպատակին։

ԿԱԶԱՑԻ ՀՈՎՏԻՑ

1. Մարտի սկզբին։

Ծպտում է արփին յստակ կամարից
Մարտի սառ, խոնաւ օդը տաքացնում,
Դաշտը սևանում, զրկվում ձիւնից,
Նոճերն օրէցօր զրաարթ թարմանում։

Երբեմն նրանց մէջ քմահաճ քամին
Երգեր է երգում՝ կամաց, մօնօտոն.
Ուրախ են նրանք իրիկնաժամին
Արևին ճամբում դէպի հորիզոն։

Եւ վերջալոյսի կիսախաւարում
Դաշտն օրօրելով ախորժ, քչքչան
Եւ կայտառ ձայնով, ջրերն է գլորում
Լեռնային գետակն՝ շտապող Կաչան։

Դեռ նոր է զարթում բնութիւնն այստեղ,
Բայց շուրջդ նայիր, տես՝ ի՞նչ պէյզաժներ,
Իսկ լուսնի լոյսով որքա՜ն են շքեղ
Եւ նոճ, և վտակ, և նիրհող սարեր։

Փիչ ևս կ՚անցնի, գարունը կը գայ,
Կը զուգէ հովտին վառ ծաղիկներով
Եւ ամենուրեք, որտեղ մի թուփ կայ,
Օդը կը լցուի դայլայլիկներով։

Այնժամ ես այդից մինչև երեկոյ,
Ունկնդիր բնութեան հոգեզուարթ հիմնին,
Այստեղ, ստուերախիտ ծառերի ներքոյ
Լայն հանգիստ կը տամ իմ հոգնած մարմնին։

ԿԱԶԱՑԻ ՀՈՎՏԻՑ

2. Գարնան առաւօտ։

Բարձր եմ կանգնած հովտի վրայ.
Բայց ինձանից բարձր են թռչում
Կռունկների երամները։
Սքանչելի և անմահ
Պատկերներ են իմ դէմ բացվում.
Է՛լ հրաշալի տեսարաններ
Կռունկներն են վերից տեսնում,
Եւ համբացած սքանչելիքից,
Կորցրած խօսքի կապակցութիւնն՝
Կռռոցով են յայտնում իրանց
Հիացումը, սքանչացումը։
Իմ լեզուն էլ ասես կապ է։
Այն ի՞նչ չքնաղ տեսարան է...
Տես. կապուտակ պարզ կամարում
Բորբոքվում է արեգակը։
Օդը տաք է։ Թող քո հոգին
Զը վրդովուի, որ ողջ Եայլան *)
Դեռ ծածկուած է արծաթ ձիւնով
Եւ արևի հետ է խաղում։
Այն պսպղուն ճերմակի տակ
Թրպրտում է մտատաղ գարունն,

*) Խրիմի լեռների շարքը։

Որն իշխում է արդէն հովտում։
Թող չը խաբուեն քո աչքերը,
Երբ որ տեսնես, որ այս անվերջ
Պարտէզն էլ է սպիտակել.
Այն ձիւն չէ, ոչ. այն գարունն է
Ծերուկ ձմրան վրայ խնդում.
«Կը ճերմակցնեմ, բայց չեմ մեռնի.
Նոր կեանք կը տամ». ահա ինչ է
Ասում նրան աշխոյժ գարունն,
Եւ նրա մեղմ քրքջոցին
Միանում է թեթևասոլիկ
Վճիտ Կաչան, որն իր խաղուն
Այլիքներում կոտրատում է
Եւ ժռմռում ափին բսնող
Բարձրահասակ նոճիների
Երկայն-երկայն պատկերները։
Նոճիները՝ խիստ բարկացած
Խեղկատակի խաղերի վրայ,
Է՛լ աւելի շակվում են,
Իրանց հպարտ գլուխները
Գոռոզութեամբ բարձրացնում են
Աշխատելով հայեացք ծգել
Բլուների միւս կողմը...

Է. ՄԱՀՏԵՍԵԱՆԻ ՆԿԱՐԻ ԱՌԱՋ

Սև, մռայլ ամպեր երկինքն են պատել.
Եռ է գալիս ծովն, անչափ կատաղում.
Ծանր կոհակներն սարեր են դառել,
Իրար են անցնում, ցիր-ցան փշրվում։

Կոծում են նրանք ժայռը եղերքի,
Փրփուրով ծածկում երեսը ծովի.
Մռայլ է իջնում ողջ ծովին. վայրկեան.
Նայիր տարերքին՝ փոթորիկն է այն...

Ա Լ Մ Է *)

(Պոէմա)

I.

Շատ տարի առաջ, երբ որ տակավին
Խրիմի փարթամ, պերճ թերակղզին
Թաթար ազգությեան ձեռքն էր գտնվում,
Մի անտառախիտ լեռան ստորոտում,
Որտեղ հարաւի բնությեան բացած
Զբնաղ տեսքերից մարդ խսպառ զրաւուած
Իսկի յագենալ չէր կարողանում՝
Ապում անունով թաթար էր ապրում.
Երջանիկ էր նա և զոհ իր կեանքից՝
Աստուած չէր զրկել նրան ոչնչից.
Արկղերով ոսկի, արծաթ նա ունէր,
Անհաշիւ անդեայ ու երամակներ։
Ամեն հարեւան նախանձում էր միշտ,
Որ ապրում է նա բաւական, անվիշտ...

---

*) Սիւժետը վերցրուած է ռուսերէնից։

II.

Բայց իր դանձերից անչափ աւելի
Սիրում էր Ալումն իրա նաղելի
Մատաղ ամուսնուն՝ չքնաղ Ալ՝մէին.
Նրա սեւորակ աչքերի միջին
Անհուն կրակ կար։ Քայլում էր թեթեւ.
Նաղուկ էր իրանն ու վայելչածեւ,
Եւ ինչպէս կարմիր ու պայծառ արեւ՝
Շրթերի ժպիտն ամենքի դէմքին
Մի լոյս էր սփռում։ Եւ գիշերային
Պլպլան ու վառ աստղերի նման
Նրա սքանչելի երեսի վրան
Փայլ էին տալիս զոյգ գիւթիչ աչքեր.
Եւ սիրտ փայփայող անուշ ծայն ունէր։

III.

Ալումն էլ ուրիշ կին չէր կամենում.
Եւ չէր գտնուի ամբողջ Խրիմում
Մի ուրիշ սիրուն, գեղեցկադէմ կին,
Որ նման լինէր չքնաղ Ալ՝մէին։
Եւ ո՞վ էր կարող Ալ՝մէի նման
Սիրել թաթարին, փաղաքշել նրան
Ջերմ ու բոցավառ անսահման սիրով։
Երբ տեղ էր գնում Ալումը գործով,

Ալ՝մէն օրերով նրան սպասում,
Մերթ լերան մինչև գագաթն էր ելնում
Եւ սուր հայեացքով հեռուն էր նայում—
Հազիւ նշմարուող օծապատոյտ ճամբին,
Որտեղից պիտ գար իրա սիրելին։
Եւ հէնց որ հեռուից տեսնում էր նրան,
Վազում էր ուրախ նրա հանդիման,
Կարմրրած դէմքով բաց գիրկն էր ընկնում,
Սիրաղեղ համբոյր դէմքին դրոշմում։
Եւ տուն էր դառնում Ալումը կամաց
Իր ջահել կնոջ իրանը գրկած։
Քառամանեակներ տալիս էր նրան
Զանազան օղեր և ապարանջան.
Իսկ նա գրանցից անչափ գոհ մնում,
Ժպտում էր ուրախ և ծափ էր զարնում։
Գիշերն էլ նստած նոճի ծառի տակ,
Երբ պարզ երկնքում լողում էր լուսնակ,
Լսում էր Ալումն իր կնոջ կողքին
Նրա սիրաշունչ, անուշ մեղեդին։
Եւ բարձր նոճին խորհում էր, խորհում.
Ծովն էլ երկնահուպ լերանց ստորոտում
Հրաշալի բաներ պատմում էր անվուռ,
Եւ հեռուն—հեռուն, ով գիտէ, թէ ուր՝
Սոխակի անուշ երգերն օդի մէջ
Շաղ էին տալիս իրանց ելևէջ։
Իսկ ցընորասոյզ գիշերը պայծառ

Լողում էր հանդարտ, լողում անդադար
Անեղը, անսահման տարածութիւնով՝
Ամպի եռեւից աստղ կորցնելով...

IV.

Երկար ժամանակ անցաւ այն օրից,
Երբ ճամբայ ընկաւ Ալումը տանից.
Նրա ետ դալու օրն էլ անց կացաւ
Բայց նա տակաւին չը վերադարձաւ:
Ալ՝մէն անհանդիստ լինել սկսաւ՝
Նրա դալստեան երկար սպասելով.
Էլ չէ հրապուրվում նա ոչ մի բանով:
Իզուր է ուրախ ժպտում պարզ արփին
Զուր է շշնջում ստուերախիտ սօսին,
Իզուր են անուշ բուրում ծաղիկներ,
Զուր է՛լ քաղցրաձայն երգում սոխակներ:
Ալումը չը կայ—Ալ՝մէի համար
Արևն էլ կարծես չէ փայլում պայծառ,
Ծաղկունքն էլ անուշ չեն բուրում իսպառ,.
Իսկ սոխակների քաղցր մեղեդին
Հաղիւ թէ պատմէ իր լսողներին
Նրա անհուն սէրն ու վիշտը խորին:
Փոխուել է Ալ՝մէն. նիհար ու տխուր
Օրերով մի տեղ նստում է նա լուռ,
Աչքերը դէպի ճանապարհն ուղղած

Եւ փոքրիկ ծեռքերն անզօր վայր թողած:
Էլ չէ երևում առաջուայ նման
Նազիկ կարմրութիւնն այտերի վրան.
Գլուխն անդադար կորանում է ցած,
Եւ նուրբ թելերով ասեղնագործած
Շքեղ շապկի տակ անհանդիստ կերպով
Կուրծքն է բարձրանում, ներքուստ
մաշուելով:

V.

Անցան մի քանի տաղտկալի օրեր,
Ալումը դարձաւ. բայց մենակ չէր՝
Իր հետ նա բերեց անչափ դեղեցիկ,
Զարա անունով՝ մի թաթար աղջիկ:
Գողցել էր նրան Միրզա—Կեմալից՝
Մի անագորոյն, չար բռնակալից
Եւ ընկերուհի բերել Ալ՝մէին:
Ալ՝մէն կեանք առաւ կարծես վերստին.
Անխոս շրթունքներն ուրախ ժպտացին,
Սփրթնած այտերն ալ-կարմրեցին
Եւ զուարթ երգերն էլի հնչեցին.
Իսկ մատաղահաս իր ընկերուհուն
Առաջին օրից նա սիրեց անհուն:

VI.

Եւ ինչպէս Ալ՝մէն՝ սիրուն էր Զարան,
Բարակ ու ճկուն՝ ճիշդ օձի նման.
Գեղահիւս երկար ծամեր էր կրում,
Որոնցով կանանց նախանձն էր շարժում:
Սակայն նա ունէր աւելի մեծ դանձ,
Որ խպտաւ գերում, գիւթում էր մարդկանց,
Բայց յուզում էր միշտ, խռովում Ալ՝մէին.
Դա ընշարհիկ աչիկներն էին.
Սև չէին նրանք. դորշ գոյն ունէին,
Խոշոր էին խիստ և տարօրինակ.
Երբ մի-մի անգամ երկար, սևորակ
Եւ գեղատեսիլ թարթիչների տակ
Նրանք կիսով չափ փակ էին լինում՝
Հեզիկ էր նրանց հայեացքը թւում
Եւ խաղաղ, հանգիստ. բայց արժէր միայն
Նրանց բարձրանալ—և հէնց նոյն ժամայն
Բրգինկւում էին աչքերը հրով
Եւ փայլում մի սուր, պողպատի փայլով:
Երգելու շընորհք թէպէտև չ՝ունէր,
Բայց սահուն, թեթև պարել նա գիտէր
Դափը բարձրացրած գլխիկի վրան
Եւ կորացնելով նրբակազմ իրանն.
Պարը գնալով արագ էր դարձնում
Եւ էլ գեղեցիկ շարժումներ գործում.

Իսկ խորհրդաւոր աչքերի միջին
Կրակ էր վառվում և մարում կրկին...

VII.

Ինչ-որ ուրախ չէ վերջին ժամանակ
Միշտ զբաղած Ալումն, ու իրա հոգեակ
Զքնաղ Ալ՝մէին առաջուայ նման
Նա չէ համբուրում, փայփայում նրան.
Վազուց է արդէն իր հսկայ կրծքին
Չէ սեղմում նրան սիրով, ջերմագին...

VIII.

Գիշեր է խորին և շուրջն ամեն ինչ
Քաղցր ու անդորրիկ վայելում է նինջ.
Իր արծաթագօծ շողքը լուսնկան
Թափել է առատ աշխարհի վրան.
Մութ-կապուտագոյն յատակ երկնքում
Անթիւ ճաճպան աստղեն են փայլում.
Անհշան քամին անզօր հառաչեց
Եւ քիչ էլ անցած ուժասպառ ննջեց:
Մի հեռու տեղից լսվում են յայտնի
Ձիլ ճռճռոցներն անհոգ ճպուռների:
Եւ քնքշանալով անկուշտ ու անյագ
Երկիրը գարնան համբոյրների տակ՝

Չէ կարողանում քնել։ Վարդերի
Եւ անուշահոտ մոգնոլիաների
Բուրմունքն է հոսում։ Հսկայ սոսիներն
Կանգնած են անշարժ. իսկ միմոզաներն
Մի բան են փսփսում։ Եւ հարաւային
Անդորը, սքանչելի գիշերուայ ժամին
Լսվում են յանկարծ մեղմիկ, կամացուկ
Համբոյրի ձայներ, ծիծաղ ու շշուկ.
Ալումն է այդում քնքուշ Զարային
Փայփայում այս ուշ գիշերուայ ժամին.
«Ես սիրում եմ քեզ, սիրում անսահման.
Պատասխանիր ինձ, Զարա աննման՝
Յոժար ես արդեօք իմը լինելու...
Իմ չքնաղ Զարա, ինչո՞ւ լուռ ես դու։
Վերջապէս ասա, սիրելի՞ չեմ քեզ։
Նայիր ինձ վրայ, չես դանի ինձ պէս
Մի ուրիշ Ալումն։ Որտե՞ղ կը տեսնես
Աչքերիս նման սեւորակ աչքեր,
Որտե՞ղ կը դտնես էլ խիտ դանդուրներ.
Իմ ուսերի պէս ոմ ունի ուսեր.
Էլ հարուստ ըղձեստ և էլ սուր դանակ
Չես դտնի բնաւ, իմ անդին հոգեակ։
Ես չեմ վախենում իսկի ոչ ոքից,
Ամենքն էլ Թագուն վախում են ինձնից։
Դէ՞հ, ասա մի խօսք, Զարա նազանի
Եւ ամենայն ինչ քոնը կը լինի»։

Նրա խօսքերից արբեցած Զարան
Այսպէս է ահա տալիս պատասխան.
«Ես սիրում եմ քեզ, Ալում իմ անդին.
Ոչ թէ քո շքեղ շորը Թանգագին,
Ոչ թէ սուր հայեացքն այդ սև աչքերիդ,
Ոչ թէ դանդուրներն ալիք մազերիդ,
Այլ քո հսկայ ոյժն և սիրտդ անվախ
Սիրելի են ինձ։ Սակայն դու, աւա՜ղ,
Ինձ կին չես կարող առնել։ Իմացիր՝
Խանդոտ է Ալ՝մէն և վրէժխնդիր»։

Ա Լ Ո Ւ Մ.

«Օ՜, դրա մասին մի՛ էլ մտածիր.
Ի՞նչ է որ Ալ՝մէն, Զարա Թանգագին։
Ինձ մօտ կը լինես նրա տիրուհին»։

Զ Ա Ր Ա.

«Ոչ. քանի Ալ՝մէն ողջ է տակաւին,
Չէ կարելի այդ իսկի՛, բնաւի՛ն։
Վախենում եմ ես նրանից. Թող ինձ,
Թող վերադառնամ Կեմալին նորից»։

Եւ իրա փոքրիկ գլուխը Զարան
Դնելով քաջի բարձր ուսի վրան
Ճկուն իրանով սեղմուեց նրան։
Ալումի հայեացքն իսկոյն հուր թափեց

Եւ կրծքում ասես փոթորիկ փրթեց.
Նա թափով առաւ լայն խանչալն ահեղ...
Զարան ամեն ինչ հասկացաւ այդտեղ...

IX.

Իսկ Ալումի կինն իր ննջարանում
Կիսամերկ պառկած փետրալից մահճում,
Քնած է չքնաղ փերիի նման:
Գեղեցիկ ժամերն ալիքանման
Կախուած են փարթամ, քսւելով գետնին:
Քնքուշ է, հմայող աննման մարմինն.
Անշարժ են երկայն, սեւուկ թարթիչներն
Եւ շունչ առնելիս մարմարէ կրծքերն
Հանգարտ բարձրանում և ցած են իջնում:
Քունն անուշ է, խոր: Գուցէ երազում
Նա Մուհամէդի դրրախտն է տեսնում:
Ոչ. հաղիւ թէ այն լինի է՛լ շքեղ
Իր ճոխ պարտէզից. հաղիւ թէ այնտեղ
Եւս երջանիկ, գոհ զգայ իրան,
Քան այստեղ է նա, աշխարհիս վրան:

X.

Քնած Ալ՛մէի վրա կորացած՝
Ծանր է շունչ առնում Ալումը յուզուած:

Բայց ահա Ալ՛մէն մի շարժում գործեց,
Երեսը դէպի Ալումը դարձրեց
Եւ կամաց «Ալում» շշնջած քնից:
Թաթարը սասաիկ դողդողաց մէկից:
Այլ ևս էթէ մի բոպէ անցնէր,
Դանակն անկասկած իջած կը լինէր.
Բայց այդ ժամանակ բաց դրան շէմքին
Երևաց Զարան վրդովը դէմքին:
Ահաւոր Ալումն խսկոյն հասկացաւ,
Թէ նրա հայեացքն իրան ի՛նչ ասաւ.
Եւ յանկարծակի կատաղի թափով
Դանակը դէպի վեր բարձրացնելով,
Ցցեց Ալ՛մէի հմայիչ կրծքին.
Ալ՛մէն խռխռաց—աւանդեց հոգին...

XI.

Հիմա էլ Ալումն, առաջուայ նման՝
Ոսկի ու արծաթ ունի բաւական.
Ոչինչ պակաս չէ նրա հագուստից.
Բայց զրկուել է նա քուն ու հանգստից:
Լռել են խսպառ անուշիկ երգերն
Եւ անդօրացել նրա քաջ ձեռքերն:
Պերճ պարտէզներում ամենայն գիշեր,
Մօտ կէս գիշերին երևում է ստուեր,
Ճերմակ սաւանում, դանակը ձեռքին.

Այդ վրէժ է ուզում Ալ՝մէի հոգին
Եւ զուր փնդրոտում իրան սպանողին։
Սակայն շատ չ՝անցած հաւերն են խօսում
Եւ ըստուերն իսկոյն աչքից չքանում՝
Սպառնալիքներ բարձր կարդալով
Եւ զարհուրելի անէծք թափելով...

XII.

Այդ օրերից վեր մի դար է անցել.
Ալումն ու Զարան վաղուց են մեռել։
Հետքն անգամ չը կայ Ալումի պերճ տան
Եւ ոչ էլ նրա ողջ կարողութեան։
Սակայն սպանուածն, աւանդութիւնով,
Ամէն իրիկուն, ըստուերի կերպով,
Փնդրում է մինչ այդ դաժան ոսոխին
Ահեղ անէծքներ թափելով գլխին։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
7/XI—1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՅԱՆԿ

	Էջ.
Արմենակը	3
Բուքը	5
Զատրդաղը	6
Պերեկօպի պարանոցի վրայ	8
Պերեկօպի դաշտերում	9
Ծննդեան լոյսը	11
Հէյնէից («Որտե՞ղ պիտ՝ գտնեմ»)	12
Ամպեր	13
Փոթորիկ	14
Սև ծովի ափին	15
Գաղթականի երգը	16
Շ. Բոդլէրից («Ի՞նչ է ձեզ երկինքն»)	17
Ծովն աշունքին	19
Անփոյթ ճամբորդները	20
Մանուկ հովիւը	21
Հեռաւոր մտերիմներիս	22
Բոդենշտեդտից («Մի ժամանակ ես ուզեցի»)	23
«Ինչո՞ւ ես դարձեալ»	24
Էլէգիա	25
Մեծ և Փոքր Մասիս	26

Էջ.
Հէյնէից («Եւ դաշտ, և անտառ») . . 27
Մայիսեան գիշերին 28
«Զորս ընկեր էինք» 29
«Ինչո՞ւ երգիչը» 30
«Աշուղ, դու ազգիդ» 31
Սալգիրի ափին 32
Կարեկցութիւն 33
Ուղեցոյցներին 34
Արևածագ 35
Նոր տարուայ էլեգիա 36
Կոյսն ու պատանին 37
Աղօթք 38
Մահը 39
Խրիմի յուշատետրից 41
Հէյնէից («Թէ ինչպէս անդուրթ») . . . 42
Նուէրը 43
Կաչայի հովտից. 1. Մարտի սկզբին . . 44
» » 2. Գարնան առաւօտ . 46
Է. Մոնտեսեանի նկարի առաջ . . . 48
Ալ՛մէ (պօէմա) 49

ห้องสมุดกรมศิลปากร
กรมศิลปากร-ห้องสมุด

Յ. ԴԱՒԹԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ
ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ՝

1. Մ. Գօրկիյ, Մակար Զուզրա,
Թարգմ. Սիմ. Բաբիեանի . 10 կոպ.

2. Սիմ. Բաբիեան, Բանաստեղծու-
թիւններ . . . . . 20 »

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.

Դիմել՝ հրատարակչին — Армянскъ (Таврич. губ.), Ивану Давидову և Կովկասի յայտնի դրավաճառներին։

ՀՀ Ազգային գրադարան
NL0339283

22856